ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Նորապատ հեռ.(0237) 6-36-10

Թիվ 02 -- 91
07. 07. 2016թ

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ավագանու 2016թվականի հունիսի 24-ի հերթական թիվ 7 նիստի որոշումները:

Առդիր 4 էջ

Նորապատ համայնքի ղեկավար՝ Վ.Խաչատրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ

24.հունիսի 2016թվական Թիվ 7 նիստի

N 1

### ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետով Նորապատ համայնքի ավագանին՝

### ՈՐՈՇԵՑ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 24-ի հերթական թիվ 7 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ն. Ղազարյան | | | |
| Ս. Հարությունյան | | | |
| Է. Նազարյան | | | |
| Ա. Առաքելյան | | | |
| Ռ. Մխիթարյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Վ.Խաչատրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետությա
Արմավիրի մարզի Նորապատ
գյուղական համայնքի
2016 թվականի հունիսի 24-
թիվ 7 հերթական նիստ
N 1 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 24 ՀՈՒՆԻՍԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. Օրակարգի հաստատում

Վ.Խաչատրյան /Համայնքի ղեկավար/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 10 նիստի N 3-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Վ.Խաչատրյան /Համայնքի ղեկավար/

3. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդային կարգով վաճառելու մասին:

Վ.Խաչատրյան /Համայնքի ղեկավար/

Աշխատակազմի քարտուղար Վ.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

24 .հունիսի 2016 թվական Թիվ 7նիստի

N 2 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 1 0 ՆԻՍՏԻ N 3 _Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով , <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

## ՈՐՈՇԵՑ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 10 արտահերթ նիստի , Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի մասին N 3 –Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Բաժին 1 խումբ 1 դաս1 օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում 5113 հոդվածից 95,0 հազար դրամ տեղափոխել 5122 հոդվածի վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող 10-րդ օրը:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ն.Ղազարյան | | | |
| Ս.Հարությունյան | | | |
| Է.Նազարյան | | | |
| Ա.Առաքելյան | | | |
| Ռ.Մխիթարյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Վ.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

24.հունիսի 2016թվական Թիվ 7 նիստի

N 3-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին՝

ՈՐՈՇԵՑ

1.Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի սեփականություն հանդիսացող ,Արմավիրի մարզի Նորապատ, 5-րդ փողոց 1/10 և 5-րդ փողոց 1/4 հասցեում գտնվող ,համապատասխանաբար 0,00845 հեկտար և 0,00465 հեկտար 04-075-0207-0023 և 04-075-0207-0024 ծածկագրերի տակ գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության տարածքները օտարել բաց աճուրդային կարգով:

2. Բաց աճուրդային կարգով օտարման մեկնարկային գին սահմանել համապատասխա-նաբար

ա. 139500 ՀՀ դրամ,որը հողամասի կադաստրային արժեքն է, մեկնարկային քայլ՝ 7000 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 7000ՀՀ դրամ:Աճուրդի մասնակցության վճար սահմանել 5000 ՀՀ դրամ;

բ. 253500ՀՀ դրամ ,մեկնարկային քայլը՝ 13000ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 17000ՀՀ դրամ, աճուրդի մասնակցության վճար սահմանել 5000 ՀՀ դրամ;

3. Համայնքի ղեկավարին՝իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները,աճուրդն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ն. Ղազարյան | [signature] | | |
| Ս. Հարությունյան | [signature] | | |
| Է. Նազարյան | [signature] | | |
| Ա. Առաքելյան | [signature] | | |
| Ռ. Մխիթարյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Վ.Խաչատրյան